ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵԿԵՂԵՑԻ (*EKKLESIA*)
SPECIAL TOPIC: CHURCH (*EKKLESIA*)

Այս հունարեն տերմինը՝ *ekklesia*, բաղկացած է երկու բառից՝ «դուրս» և «կանչված» հետևաբար տերմինը ակնարկում է Աստծո կողմից դուրս կանչված մարդկանց: Վաղ եկեղեցին այս տերմինը վերցրեց աշխարհիկ կիրառությունից (տես՝ Գործք 19:32, 39, 41) և Սեպտուագինտայում Իսրայելի «համայնքի» համար այս տերմինի գործածության հիման վրա (*Qahal*, BDB 874, տես՝ Թվոց 16:3, 20:4): Նրանք կիրառում էին այս բառը իրենց համար որպես ՀԿ-ի Աստծո Ժողովրդի շարունակություն: Նրանք նոր Իսրայելն էին (տես՝ Հռոմ. 2:28-29, Գաղ.6:16, 1 Պետ. 2:5,9, Հայտ.1:6), աշխարհի մասշտաբով Աստծո առաքելության կատարողները (տես՝ Ծննդ.3:15; 12:3; Ել.19:5-6, Մատթ.28:18-20, Ղուկ.24:46,47, Գործք 1:8, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵ-ՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ) և Միլլարդ Էրիքսոնի *Քրիստոնեական Աստվածաբանություն*, 2րդ խմբագրություն, էջ՝ 1052-1053, «Եկեղեցին և Իսրայելը» /Millard Erickson, *Christian Theology*, 2ed, pp. 1052-1053, “The Church and Israel”/:

Ավետարաններում և Գործքում այս տերմինը գործածվում է մի քանի իմաստով.

1. քաղաքի աշխարհիկ ժողովը՝ Գործք 19:32, 39, 41
2. Քրիստոսով Աստծո տիեզերական ժողովուրդը՝ Մատթ.16:18 և Եփեսացիներին (այսինքն՝ Եփես. 1:22-23, 3:10,21, 4:4, 5:23, 1 Կորնթ. 10:32, 11:22, 12:28, Կող. 1:18,24, Եբր. 12:23)
3. Քրիստոսով հավատացյալների տեղական համայնքը՝ Մատթ.18:17; Գործք 5:11 (այս համարներում Երուսաղեմի եկեղեցին), Գործք 13:1, Հռոմ. 16:5, 1 Կորնթ. 16:19, Կող. 4:15, Փիլիմոն հ. 2
4. Իսրայելի հավաքական ժողովուրդը՝ Գործք 7:38, Ստեփանոսի քարոզի մեջ
5. Աստծո ժողովուրդը ինչ-որ տարածաշրջանում՝ Գործք 8:3, Գաղ. 1:2 (Հուդան կամ Պաղեստինը):

Եկեղեցին հավաքված մարդիկ են և ոչ թե կառույցը: Հարյուրավոր տարիներ շարունակ եկեղեցաշենքեր գոյություն չեն ունեցել: Հակոբոսում (ամենավաղ գրված գրքերից մեկը) եկեղեցին նշվում է "*synagōgē*" (ժողովք) տերմինով: Եկեղեցու համար այս տերմինը կիրառված է միայն Հակոբոսի գրքում (տես՝ Հակ. 2:2; 5:14):